ԳԷՀ "ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՏԱՌԻ ԳԼՈԲԱԼ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ" ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

Ծրագրի գլխավոր նպատակն է՝ որոշում կայացնողների և քաղաքացիական հասարակության համար հասանելի դարձնել այն տեխնոլոգիաները և տեղեկատվության հավաքագրման գործիքները, որոնք կօգնեն նվազեցնել անտառահատումները, կնպաստեն անտառային կենսաբազմազանության պահպանությանը և վերարտադրությանը՝ զարգացնելով օգտատուների համար նորարարական մոտեցումներ, դյուրացնելով տեղեկատվության և վերլուծությունների ներկայացումը:

- Կենսաբազմազանության պահպանության բարելավում
- Հողօգտագործման կայուն կառավարում
- Անտառկառավարման բարելավում
- Անտառային լանդշաֆտների վերականգնում

gef

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

UN environment

WORLD RESOURCES INSTITUTE

GLOBAL FOREST WATCH

REC CAUCASUS

Նախագծի բաղադրիչներ

1. Հավաստի և արդիական տեղեկատվության հասանելիության օգնությամբ խթանել հողօգտագործման ոլորտում որոշմների կայացման գործընթացը

2. Ոլորտում հիմնական դերակատարություն ունեցող կառույցների կարողությունների հզորացում՝ կիրառելու ժամանակին ինֆորմացիան հողօգտագործման որոշումների կայացման գործում:

Արդյունքներ

1.1 Հայաստանում հողօգտագործման կայուն կառավարման և անտառային լանդշաֆտների վերականգնման, պլանավորման և իրականացման աշխատանքներին օժանդակելու նպատակով, ապահովել անտառների արդյունավետ կառավարումը և կենսաբազմազանության պահպանությունը՝ առավել հավաստի տեղեկատվության տրամադրման միջոցով:

1.1.1 Շահագրգիռ կողմերի քարտեզագրում և վերլուծություն, Հայաստանում անտառների, հողօգտագործման և կենսաբազմազանության վերաբերյալ առկա տվյալների հայտնաբերում և գույքագրում:

1.1.2 Հայաստանում հողօգտագործման վերաբերյալ ավելի լավ որոշումների կայացման և ինֆորմացիայի ավելի հեշտությամբ տարածման նպատակով անատառների և հողօգտագործման ինտերակտիվ հարթակի ստեղծում, որը իր մեջ կներառի առկա վերլուծության գործիքներ:

1.1.3 Վերականգնման հնարավորությունների քարտեզագրում, որի միջոցով կհաշվարկվի Հայաստանում վերականգնման հնարավորությունների մակերեսը՝ հիմնվելով ստեղծված, փորձարկված և կիրառված լավագույն մեթոդաբանության վրա:

1.1.4 Քաղաքականության մշակման գործիքի նախագծում՝ ներառյալ առաջնահերթություն ունեցող մեկ լանդշաֆտի օրինակով անտառվերականգնման և հողօգտագործման պլանավորման իրագործելիության պլանի մշակում:

2.1

Փոխանակման և վերապատրաստման ծրագրերին մասնակցելու միջոցով Հայաստանում շահագրգիռ կողմերի մոտ ձևավորել անհրաժեշտ ներուժը կիրառելու Անտառի գլոբալ մոնիտրինգի (GFW) գործիքները հողօգտագործման վերաբերյալ որոշումների կայացման գործում

2.1.1

Նախագծի իրականացման նպատակով բազմաոլորտ աշխատանքային խմբի ստեղծում:

2.1.2

Հարթակի և վերականգնման հնարավորությունների քարտեզի կիրառումը խրախուսելու նպատակով իրազեկման իրականացում և դասընթացների անցկացում՝ կառավարության, ՀԿ-ի, ակադեմիական և այլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների շրջանակում:

REC CAUCASUS

Այգեստան փող. 7, շենք 2, 0010, Երևան, Հայաստան
Հեռ./Ֆաքս: +374 11 574743 / +374 11 575148
Էլ.փոստ: nune.harutyunyan@rec-caucasus.org, nune.harutyunyan@rec-caucasus.am
Կայք: www.rec-caucasus.am